## *ԿԱՐԾԻՔ*

*Համլետ Սերգեյի Սիմոնյանի «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեկնածուական ատենախոսության մասին ներկայացված փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:*

Գլոբալացվող աշխարհը փոխվում է մեծ արագությամբ, հետարդիականությունից անցնում մետաարդիականության փուլ: Շատ մտածողների կարծիքով մարդկությունը թևակոխում է հետազգային ժամանակաշրջան: Փոխվում են կյանքի ու ապրելակերպի էթնո-մշակութային, սոցիալ-մշակութային ամրակայված շատ ձևեր, որոնք տևական ժամանակ կարգավորել են ներազգային, ներսերնդային, միջսերնդային կապերն ու հարաբերությունները: Այստեղից է բարձրանում այն կարևոր հարցը, թե ինչպիսին են և ինչպիսին են դառնալու ներազգային կյանքի կազմակերպման, համակեցության այն նորմերն ու հարաբերությունները, որոնք կարգավորելու և կայունացնելու են ներազգային, ներսերնդային համակեցության հարաբերությունները: Այդ հարցերի քննարկմանն է նվիրված գրախոսվող ատենախոսությունը:

Ատենախոսը ձգտում է բացահայտել կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների փոխհարաբերությունը սահմանող և կանոնակարգող գոյաբանական կարգ, որը քննարկում է երկու ենթահարցերի դիտանկյունից.

1. Սերունդների կետսափորձը որպես սոցիո-մշակութային նախագիծ:

2.Միջսերնդային փոխհարաբերությունների քննարկումը սոցիալական կյանքի համատեքստում:

Ենթահարցերին պատասխանելու համար ատենախոսը իր առջև դնում է հետևյալ խնդիրների բացահայտումը.

1. Կյանքի կազմակերպման մշակույթը դիտել որպես ինստիտուցիոնալ նախագիծ:

2. Նորովի ներկայացնել սերունդների փոխհարաբերությունը ազգային ինքնության համատեքստում:

3. Պատմական հիշողությունը դիտել որպես սերունդների համակեցության սոցիալ-մշակոսւթային համատեքստ:

Ատենախոսության գիտական նորույթ պարունակող դրույթներից են.

1. Կյանքի կազմակերպման մշակույթը դիտել որպես սերունդների փոխհարաբերությունը կարգավորող ինստիտուցիոնալ նախագիծ, որը սահմանում է «խաղի

կանոններ», որոնք նոր սերնդի համար ծառայում են որպես կենսագործունեության կազմակերպման ուղեցույց:

2. Ինստիտուցիոնալ նախագիծը դիտել որպես նախորդ սերնդի կենսափիլիսոփայություն:

3. Քանի որ ավանդական համակարգերում նախորդ սերունդների «ավանդույթի ուժով» գործող գոյաբանական կարգը հիմնականում անհանդուրժող է նորարության և փոփոխության նկատմամբ, ուստի նման համակարգերում նախնիների անցյալը կարելի է դիտել որպես ամեն նոր սերնդի ապագա:

4. Պատմական հիշողությունն ինքնին ընտրողական և մեկնողական անվերջ գործընթաց է, որի շրջանակներում անցյալը վերաիմաստավորվում և վերակառուցվում է՝ հարաբերվելով ներկայի սոցիալ-մշակութային պահանջներին:

5. Սոցիալական կայունությունը էականորեն ազդում է համակարգի կենսունակության վրա, որի պատճառով կարևորվում են ոչ միայն ներսերնդային, այլև միջսերնդային փոխհարաբերությունների խնդիրները:

Ատենախոսության առաջին գլխում («Սերունդների կենսափորձը որպես սոցիոմշակութային նախագիծ») ատենախոսը քննարկում է երեք հիմնախնդիր.

1. Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների փոխհարաբերության ինստիտուցիոնալ նախագիծ:

2. Ինքնության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերություններում:

3. Պատմական հիշողությունը որպես սերունդների համակեցության սոցիոմշակութային համատեքստ:

Համակողմանիորեն քննարկելով նշված հիմնախնդիրները ատենախոսը կատարում է հետևյալ եզրահանգումները.

1. Նախնիների կյանքը նույնությամբ չապրելու համար անհրաժեշտ է, որ ամեն նոր սերունդ իր կարողության սահմաններում արդիականացնի նախնիներից ժառանգած կյանքի կազմակերպման մշակույթը:

2. Ժամանակակից գլոբալացվող աշխարհում անցյալի հետ կառուցողական երկխոսություն կազմակերպելու նոր անհրաժեշտություն է առաջանում, որում կարևորվում է այն հարցը, թե ինչ դերով ու համամասնությամբ կարող են «...անցյալի փորձը, ներկայի իրողություններն ու ապագայի նախանշվող տեսլականը ներառվել սերունդների ինքնության կառուցակարգման և արդիականացման գործընթացներում» (ատենախոսություն, էջ 53):

3. Անցյալի սոցիոմշակութային գանձարանի պահպանումը և փոխանցումը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր նոր սերնդի ինքնության ձևավորման համար, որովհետև դրանում ամփոփվում են սերունդների նույնականացման համար անհրաժեշտ տարրեր, առանց որոնց անհնարին կլիներ ինքնության շարունակականությունը:

Ատենախոսության երկրորդ գլխում («Միջսերնդային փոխհարաբերությունները սոցիալական կյանքի կառուցման նամատեքստում») քննարկվում են հետևյալ հիմնախնդիրները.

1. Պատասխանատու կախվածությունը որպես սերունդների փոխհարաբերություններ կարգավորման սոցիոմշակութային հիմունք:

2. Արդարության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերություններում:

3. Սոցիալական կայունության հիմնախնդիրը միջսերնդային փոխհարաբերությունների համատեքստում:

Վերլուծության արդյունքում ատենախոսը կատարում է հետևյալ ընդհանրական նշանակություն ունեցող պնդումները.

1. Պատասխանատու կախվածությունը, անկախ սերունդների տարաձաժամանակային կարգավիճակից, հանդես է գալիս որպես համակեցության կարևոր պայման, որովհետև ապահովում է տվյալ սոցիոմշակութային կարգի գործառնության արդյունավետությունը:

2. Սոցիալական արդարության հիմնախնդիրն առանցքային նշանակություն ունի միջսերնդային փոխհարաբերությունների կարգավորման համար:

3. Սոցիալական կայունությունը դիտարկվում է որպես ապագա սերունդների բարեկեցության ապահովման կարևոր գործոն:

Այսպիսով՝ ատենախոսության բովանդակության նույնիսկ այս համառոտ վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակը նկատելի աշխատանք է կատարել թեմայի ուսումնասիրության, իր առջև դրած հիմնախնդրի լուծման ուղղությամբ: Ներկայացվել են սերունդների համակեցության տարբեր շերտեր, կողմեր, ոլորտներ: Ատենախոսությունը մասնագետ հետազոտողների համոզումների և հեղինակային դիրքորոշումների ներդաշնակ միավորում է:

Ատենախոսությունում տեղ են գտել բազմաթիվ հետաքրքիր մտքեր, ձևակերպումներ, համեմատություններ (ատենախոսության 12, 14, 15, 41, 43, 60, 62, 63, 64, 83, 85 և այլ էջեր):

Այս ամենով հանդերձ ատենախոսությունում տեղ են գտել մի շարք բացթողումներ, առարկելի տեսակետներ: Առանձնացնենք մի քանիսը.

I. Ատենախոսության լեզուն, նյութը շարադրելու կերպը, ձևը, որի արդյունքում շատ դրույթներ, էջեր, պարբերություններ համարժեք հասկանալու խնդիր են ստեղծում: Բազմաթիվ ձևակերպումներ դարձել են լրացուցիչ մեկնաբանման կարոտ: Օրինակ՝

ա) Ատենախոսություն էջ 4. «Խնդիրն այն է, որ այս ամենի հետևանքով հարկ է դառնում սոցիոմշակութային նոր պայմանների տրամաբանության շրջանակներում ուրվագծել ապագայի գոյաբանական մի նախագիծ, որում սոցիալական կայունության, սերունդների միջև արդարության և պատասխանատվության, մի խոսքով՝ սերունդների համակեցության գոյաբանական կարգի մասին պատկերացումները կնպաստեն ոչ թե ժամանակավոր կամ պայմանական ինչ-որ իրականության, այլ երկարաժամկետ գոյաբանական կարգի արմատավորմանը»:

բ) Ատենախոսություն էջ 5. «Եղած ուսումնասիրությունները հիմնականում առնչվում են համակեցության գոյաբանական կարգի առօրեականության համատեքստին, ինչը, սական, հիմնովին չի բացահայտում սերունդների համակեցության սոցիոմշակութային այն առանձնահատկությունները, որոնց շնորհիվ կյանքի կազմակերպման մշակույթը կարելի է դիտարկել որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ»:

գ) Ատենախոսություն էջ 58. «Սոցիալական կարոտախտն այս իմաստով փորձում է վերականգնել անցյալում գործող համակեցության կարգը՝ համարելով, որ դրա միջոցով է հնարավոր ապահովել ինքնության շարունակականությունը ու դեպի ապագա նայող գոյաբանական նախագծի մշակումը»:

դ) Սեղմագիր էջ 10. «...սերունդների միջև պատասխանատու կախվածության գիտակցումն ու միջսերնդային արդարության հղանցքը սերտորեն փոխկապակցված են. փոխադարձության և պատասխանատու կախվածության վերաբերյալ մտայնությունները ի վերջո հանգում են միջսերնդային արդարության հղանցքին, իսկ վերջինիս հիմքում սերունդների միջև պատասխանատու կախվածության գիտակցության կարևորումն է» :

Մեկնաբանման կարոտ մտքերի հանդիպում ենք նաև ատենախոսության այլ էջերում (օրինակ՝ ատենախոսության 58, 62, 65, 67 էջեր) և սեղմագրում:

II. Առարկելի մտքեր.

ա) Ատենախոսը գրում է. «Սոցիալական կարոտախտն այս իմաստով փորձում է վերականգնել անցյալում գործող համակեցության կարգը՝ համարելով, որ միայն դրա միջոցով է հնարավոր ապահովել ինքնության շարունակականությունը ու դեպի ապագան նայող գոյաբանական նախագծի մշակումը» (ատ., էջ 58): Առարկելի է, որովհետև նման մոտեցմամբ անցյալը դառնում է ծանր բեռ և զրկում ազգին ապագայից, զարգացման հեռանկարից: Անցյալի մեջ ինքնություն որոնել, չի նշանակում արդեն իրեն սպառած

կենցաղավարության ձևերին, ծիսապաշտամունքային (ոչ միայն կրոնական) տարրերին կառչած մնալ, այլ պահպանել էթնոմշակութային արժեհամակարգը:

բ) Ատենախոսը գրում է. «…ներկան պետք է վերափոխի և վերակառուցի անցյալը» (ատ. էջ 62): Ուր է թե այդպես լիներ: Կմիջամտեինք և կշտկեինք պատմության որոշակի հատվածնում մեր նախնիների թույլ տված սխալները և կապրեինք պատմական հայրենիքի բնական սահմաններում, կստեղծեինք հզոր պետություն՝ մի քանի տասնյակ միլիոնի հասնող ժողովրդով և չէինք հայտնվի այսօրվա ոչ այնքան նախանձելի վիճակում: Ցավոք պատմությունը մեզ պատժում է ոչ թե անցյալը չշտկելու, այլ անցյալից դասեր չքաղելու համար:

գ) Համեմատաբար երկարաշունչ վկայակոչում: Ատենախոսը գրում է.«Այս առնչությամբ կարելի է խոսել երկու տիպի հիմնական վերաբերմունքի մասին, որոնցից առաջինի դեպքում նոր սերունդը, լիովին տարված լինելով իր «ուրիշի» կերպարով և ինչ-ինչ պատճառով չցանկանալով դուրս գալ նախնիների կյանքի մշակույթի շրջանակներից, հարմարվում ու իր կյանքը կառուցում է համաձայն նախնիների գոյաբանական կարգի: Իրավիճակ, որը նոր սերնդին դարձնում է անդեմ ու անանձնական նպատակներ հետապնդող և ընդունված գոյաբանական կարգի շրջանակներում ընդամենը գործառութային բնույթ կրող գործոնդ: Մեկ այլ դեպքում նոր սերունդը, հավատ չընծայելով վերոնշյալ դերին, գիտակցում է, որ այն ընդամենը նախնիների գոյաբանական կարգում տեղավորվելու, կամ այլ կերպ ասած՝ հանրային կյանքի բեմականացման մի մասն է, և ըստ այդմ՝ անտարբեր է, թե «հանդիսատեսը» կհավատա դրան, թե ոչ, ինչը նրան դարձնում է ցինիկ: Փաստորեն, նոր սերունդն այսպիսով կարող է վերածվել առաջխաղացման տեսլականից, ցանկություններից ու հմտրության հնարավորություններից զուրկ և սեփական գոյակերպը հեգնող աննպատակ մի գործակալի» (ատ., էջ 66-67): Եթե այն է, ինչ ես եմ հասկացել, ապա առարկելի է: Իմ կյանքի ընթացքում չորս սերունդ է փոխվել (ծնողների, իմ, ինձանից ամիջապես հետ եկող (որդիներ) և ներկայիս (թոռներ): Դրանցից որևէ մեկում վերը ներկայացված (նկարագրված) իրավիճակի չեմ հանդիպել: Եթե խոսքը տեսական մոտեցման կամ դեռևս պահպանված տարաշխարհիկ (էկզոտիկ) ցեղերի (ցեղախմբերի) մասին է, որոնց մասին հաղորդումներ ենք լսում և տեսնում հեռուստատեսությամբ, ապա լռում եմ, որովհետև նման դեպքերի համար ատենախոսը գուցե իրավացի է:

դ) Ըստ ատենախոսի «Յուաքանչյուր նոր սերունդ իր կենսաշխարհը ձևավորում է համապատասխան այն կաղապարների, որոնք տրված են նախնիների փորձում: Այսպիսի համակարգերում նախնիների անցյալը յուրաքանչյուր նոր սերնդի ապագան է: Հետևաբար զարմանալի չէ, որ նախորդ սերնդի կյանքի կազմակերպման մշակույթը հիմնականում

գործում է «ավանդույթի ուժով» ու այս առումով նաև անհանդուրժող է փոփոխությունների, նորարարությունների նկատմամբ» (ատ., էջ 20): Առարկելի է, որովհետև եթե լիներ այնպես, ինչպես ներկայացված է, ապա հասարակությունը նախնադարից, լավագույն դեպքում ավանդական հասարակությունից դուրս չէր գա: Յուրաքանչյուր սերունդ ծնվում է ավանդույթի մեջ, հասունանալով կատարում փոփոխություններ, ստեղծում իր ավանդույթները, գալիս է հաջորդ սերունդը, հարմարվում դրանց, տարիք առնելով փոխում այլևս չաշխատող ավանդույթները և այդպես շարունակ:

Վերջին դիտողությունը վերաբերում է ատենախոսի օգտագործած գրականությանը: Գրականության ցանկում նշված է 114 գիրք, որը թեկնածուական ատենախոսության համար վատ թիվ չէ: Բայց այդ գրականության առյուծի բաժինը օտարալեզու է, հիմնականում անգլերեն: Հայալեզու գրականության քանակը 26-ն է: Անշուշտ գովելի է, որ հեղինակը օգտագործում է մեծ քանակությամբ օտարալեզու գրականություն, բայց ցավալի է, որ նույն նախանձախնդրությունը չի ցուցաբերում հայալեզու գրականություն օգտագործելու դեպքում, որի արդյունքում դուրս են մնացել Հովհաննես Քաջազնունին, Լևոն Շանթը, Գարեգին Նժդեհը, Ալբերտ Նալչաջյանը և ուրիշներ: Չի օգտագործվել թեմային վերաբերող հայալեզու հոգեբանական գրականություն:

Ամփոփենք: Ատենախոսության այս համառոտ վերլուծությունը ցույց է տալիս, որ գործ ունենք խոստումնալից հետազոտողի հետ, որը կարողանում է հիմնախնդիրներ ձևակերպել, իր կարողության սահմաններում առաջադրել լուծումներ, հիմնավորել դրանք:

Հետազոտության ընթացքում հեղինակը ուսումնասիրության մեթոդաբանական հիմքեր է համարում համեմատությունը, պատմականությունը, համանմանությունը, վերլուծական և համադրական մոտեցումները:

Սեղմագրի բովանդակությունը ատենախոսության համառոտ արտացոլումն է:

Ողջ ասվածը հիմք ընդունելով, գտնում եմ, որ Համլետ Սերգեյի Սիմոնյանի «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է իր հայցած փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

*Արամ Հակոբի Սարգսյան*
*փիլիսոփայական գիտությունների դոկտոր,*
*պրոֆեսոր*
30.04.2025թ.